ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ДАШТСКИЙ СЕЛЬСКИЙ
МУНИЦИПАЛИТЕТ
АРМАВИРСКОГО МАРЗА

«22» 11 2012թ. N 26

Բջջային՝ 094 404 402

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ,
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանու 27.11.2012թ. կայացած հերթական թիվ 05 նիստում ընդունած որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

Մուտք թիվ 10497-12
«18» 12 2012թ.

Դաշտի գյուղական համայնքի ղեկավար՝ Հ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27» նոյեմբերի 2012թ. թիվ 01

ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.11.2012Թ. ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 05 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել օրակարգի հարցերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն, ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Աշոտ Աբրահամյան

Անահիտ Աղաջանյան

Սարգիս Գևորգյան

ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2012թվականի նոյեմբերի 27
գ.Դաշտ

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԱՐԶԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի

ԹԻՎ 01 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2. ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԱՍԱՐ ԳՈՒՅՔ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«27» նոյեմբերի 2012թ. թիվ 02-Ն

ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Դաշտ համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 15-ի «Դաշտ գյուղական համայնքի 2012թվականի բյուջեի հաստատման մասին թիվ 03-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին տողի «3 005 600» թիվը փոխարինել «2 505 600»թվով,

2) որոշման 2-րդ կետի 1-ին տողի «12 067 200» թիվը փոխարինել«11 955 200»թվով,

3) որոշման 2-րդ կետի 2-րդ տողի «1 600 000» թիվը փոխարինել «1 199 000»թվով,

4) որոշման 2-րդ կետի 4-րդ տողի «600 000» թիվը փոխարինել «1 019 000» թվով,

5) որոշման 2-րդ կետի 5-րդ տողի «1 000 000» թիվը փոխարինել «900 000» թվով,

6) որոշման 2-րդ կետի 6-րդ տողի «760 000» թիվը փոխարինել «160 000» թվով,

7) որոշման 3-րդ կետի 6-րդ տողի «240 000» թիվը փոխարինել «180 000» թվով,

8) որոշման 3-րդ կետի 8-րդ տողի «130 000» թիվը փոխարինել «78 000» թվով,

9) որոշման 3-րդ կետի 10-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հատուկ նպատակային նյութեր»,«100 000»դրամ,

10) որոշման 3-րդ կետի 11-րդ տողի «720 000» թիվը փոխարինել «1 032 000» թվով,

11) որոշման 3-րդ կետի 14-րդ տողի «1 000 000» թիվը փոխարինել «900 000» թվով,

12) որոշման 3-րդ կետի 16-րդ տողի «760 000» թիվը փոխարինել «160 000» թվով,

13) որոշման 3-րդ կետի 17-րդ տողի «806 000» թիվը փոխարինել «556 000» թվով,

14) որոշման 3-րդ կետի 18-րդ տողի «299 600» թիվը փոխարինել «549 600» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

---------- Աշոտ Աբրահամյան

---------- Անահիտ Աղաջանյան

---------- Սարգիս Գևորգյան

---------- ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2012թվականի նոյեմբերի «27»

գ.Դաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27 » նոյեմբերի 2012թ. թիվ 03-Ն

ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

---------- Անահիտ Աղաջանյան

---------- Սարգիս Գևորգյան

---------- Աշոտ Աբրահամյան

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ---------- ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2012թվականի նոյեմբերի 27
գ.Դաշտ

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ [illegible]

2012 ԹՎԱԿԱՆԻ [illegible]-Ի

[illegible]ՈՒՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների հիմնական օբյեկտների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 6000 /վեց հազար/ դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

2.Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 / մեկ հազար/ դրամ.

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/ հինգ հարյուր / դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության

համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000/վեց հազար/ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000 / վեց հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված և սեղմված գազի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 160 000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 /հիսուն հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 35 000 /երեսունհինգ հազար / դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար / դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար /դրամ:

12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 /մեկ հազար/ դրամ:

13. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27» նոյեմբերի 2012թ. թիվ 04-Ն

ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ

1.Դաշտ համայնքի բյուջեից «Հայաստան» համահայկական հիմնադրամին կատարել նվիրատվություն 25 000դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Աշոտ Աբրահամյան

Անահիտ Աղաջանյան

Սարգիս Գևորգյան

ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2012թվականի նոյեմբերի «27»

գ.Դաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27» նոյեմբերի 2012թ. թիվ 05-Ն

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ

1.Դաշտի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատանքները առավել արդյունավետ կատարելու համար,ձեռք բերել նոր համակարգիչ և այդ նպատակի համար համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից հատկացնել՝299 600դրամ գումար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Աշոտ Աբրահամյան

Անահիտ Աղաջանյան

Սարգիս Գևորգյան

Համայնքի ղեկավար՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2012թվականի նոյեմբերի «27»

գ.Դաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 27» նոյեմբերի 2012թ. թիվ 06-Ն

ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ

1.Դաշտի գյուղական համայնքի բնակչության առօրյա հանգիստը Դաշտի համայնքի մշակույթի տանը բղվանդակալից և հետաքրքիր անցկացնելու համար համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից հատկացնել՝ 250 000դրամ գումար՝գույք ձեռք բերելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Աշոտ Աբրահամյան

Անահիտ Աղաջանյան

Սարգիս Գևորգյան

ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2012թվականի նոյեմբերի «27»

գ.Դաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ

« 27 » նոյեմբերի 2012թ. թիվ 07

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արմավիրի մարզի Դաշտ համայնքի սեփականություն հանդիսացող հողակտորները օտարել աճուրդային կարգով համաձայն հավելվածի:
2. Մեկնարկային գին, սահմանել՝
   1հա գյուղ.նշանակության 3-րդ կարգի վարելահողի համար՝ 3 045 000 դրամ,
   1հա գյուղ.նշանակության 5-րդ կարգի վարելահողի համար՝ 365 000 դրամ:
3. Աճուրդի մասին հայտարարության տեքստը ներկայացնել մամուլով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Աշոտ Աբրահամյան

Անահիտ Աղաջանյան

Սարգիս Գևորգյան

ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2012թվականի նոյեմբերի «27»

գ.Դաշտ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ

ՄԱՐԶԻ [illegible]

ՀԱՄԱՅՆՔ[illegible]

2012 ԹՎԱԿԱՆԻ [illegible] 27-Ի

ԹԻՎ 07 ՈՐՈՇՄԱՆ

ԱՃՈՒՐԴԻ ԴՐՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՃԱՇԿԱԳՐԵՐԸ

1. Գյուղ.նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ --- 0.1735հա,ծածկագիր՝ 0131-0013,
2. Գյուղ.նշանակության 5-րդ կարգի վարելահող՝ --- 0.1770հա,ծածկագիր՝ 0140-0010: